ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 17-21

ՊԵՏԱԿԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «26» «01» 2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Արմեն Խաչատրյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Գառնիկ Հովհաննիսյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» 2021 թվականի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել որոշման 1116. Անասնաբուժական ծառայություններ ծրագրի 11001. «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» միջոցառմամբ նախատեսված մինչև 1 128 794 100 (մեկ միլիարդ մեկ հարյուր քսանութ միլիոն յոթ հարյուր իննսունչորս հազար մեկ հարյուր) դրամ գումար (ներառյալ ԱԱՀ-ն)՝ 2.1.2 կետով սահմանված հաշվետվության և Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների ընդունման արձանագրության հիման վրա, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Կազմակերպության կողմից իրականացվելիք Ծրագրի միջոցառումները, ծախսերի նախահաշիվը, Ծրագրի ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույցը և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը ներկայացված են Պայմանագրի համապատասխանաբար NN 1, 2, 3 և 4 հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջել Ծրագիրը կատարել Պայմանագրով սահմանված ժամկետներում.

2.1.2 Կազմակերպությունից պահանջել Ծրագրի կատարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային

օգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 Հ-8 և տեքստային) եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվություններ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը, ինչպես նաև հաշվետվություն՝ դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման վերաբերյալ, մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը:

2.1.3 ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Ծրագրի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.4 Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Ծրագիրն՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.5 առանց իրականացված Ծրագրի միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրի իրականացման ժամկետները (Ծրագրի իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.6 սույն Պայմանագիրն օրենքով կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում՝ պահանջել վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2 Պետական մարմնի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառած վնասները:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Ծրագրի մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Ծրագրային միջոցառումները համապատասխանում են Ծրագրի և սույն Պայմանագրի

պահանջներին, ապա դրանք ընդունվում են Պայմանագրին կից Ձև 1-ի ձևաչափով կազմված ընդունման- հանձնման արձանագրությամբ:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4.1. Պայմանագրի մաս կազմող N 4 հավելվածով սահմանված ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսյակային հաշվետվությունները՝ 2.1.2 կետով սահմանված Հ-8 ձևաչափով ներկայացնել հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 10-ը, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ 2.1.2 կետով սահմանված Հ-2 և Հ-4 ձևաչափերով ներկայացնել եռամսյակային հաշվետվություն՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Սույն Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողությունները/ վերադարձնել ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.9. Սույն Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարում ներառված ավելացված արժեքի հարկի գծով հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականին ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1 Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
3.2 Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի կատարման համար Կազմակերպությանը, որպես դրամաշնորհ վճարել Պայմանագրի 1.1. կետով նախատեսված գումարը:
4.2. Կազմակերպությունը՝ հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդող ամսվա 5-ը ներկայացնում է ծախսերի կատարման հայտ և հաշվարկ-բացատրագիր, իսկ անհրաժեշտության դեպքում հունվար ամսվա հայտը կարող է ներկայացվել տվյալ տարվա հունվար ամսվա ընթացքում՝ Պայմանագրով սահմանված Ձև 2-ի համաձայն, իսկ Պետական մարմինը՝ այն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում սույն հայտով պահանջվող գումարը վճարում է Կազմակերպությանը: Հայտով պահանջվող ֆինանսավորման չափը չի կարող գերազանցել սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով հաշվետու ամսվա համար նախատեսված գումարի չափը: Ընդ որում եռամսյակային հաշվետվությունների չընդունման դեպքում ֆինանսավորումը դադարեցվում է մինչև կատարված աշխատանքների ընդունումը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Պայմանգիրը կազմված է սույն հիմնական տեքստից, հետևյալ Հավելվածներից և Ձևերից, որոնք կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը.
Հավելված N 1 -Ծրագրի միջոցառումներ,
Հավելված N 2- Ծրագրի ծախսերի նախահաշիվ,
Հավելված N 3 – Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց,
Հավելված N 4 - Ծրագրի միջոցառումների ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման ժամանակացույց,
Ձև N 1 – Հանձնման-ընդունման արձանագրություն,
Ձև N 2 - Ծախսերի կատարման հայտ:

8.2 Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքները ընդունվում են Պայմանագրին կից Ձև 1-ի հանձնման-ընդունման արձանագրությամբ, որը Պայմանագրի 2.1.2 կետում նշված ժամկետներում, Հաշվետվության հետ միասին, երկու օրինակից լրացված, ստորագրված և կնքված ներկայացվում է Կազմակերպության կողմից:

8.3 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.4 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ 14 էջից, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.5 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝	Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն Հ/Հ 900011032050 ՀՎՀՀ 02698604	ք.Երևան, Էրեբունի 12/6 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն Հ/Հ 900018003872 ՀՎՀՀ 01805817
Գլխավոր քարտուղար՝ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ	Տնօրեն՝ ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
2021 թվականի ----------կնքված
N---------- պայմանագրի

ԾՐԱԳՐԻՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	**Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում**	***Ծրագրի նպատակն է՝*** *ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Կենդանիների կարանտինային, հատուկ վտանգավոր և պարտադիր ծանուցման ինֆեկցիոն հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 1081-Ն որոշման մեջ սահմանված հավելվածներով՝ մի շարք կենդանիների, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների նկատմամբ հանրապետության բոլոր համայնքներում իրականացվում է անասնահակահամաճարակային կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ՝ ապահովելով և պահպանելով հանրապետությունում հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ, կենդանիների և մարդու*	***Ծրագրի շրջանակներում նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները.*** *2021 թվականին հանրապետության բոլոր համայնքներում նախատեսվում է կենդանիների վարակիչ հիվանդությունների, այդ թվում նաև կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված 8 հիվանդությունների /բրուցելոզ, փուբերկուլյոզ, լեյկոզ, խլնախտ, սիբիրախտ, դաբաղ, խշխշան պալար, հանգուցավոր մաշկաբորբ/ նկատմամբ իրականացնել 5303042 պատվաստումներ և ախտորոշիչ միջոցառումներ:* *Նշված աշխատանքներն իրականացվելու են անասնաբույժ մասնագետների կողմից, որոնք կատարված պատվաստումների և ախտորոշիչ միջոցառումների վերաբերյալ պարբերաբար*	*Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ունենալ Հանրապետությունում կայուն անասնահամաճարակային վիճակ, կենդանական ծագման ավտանգ սննդամթերքի և հումքի ապահովում:* *Հանրապետությունում յուրաքանչյուր տարի շուրջ 580.5 հազ գլուխ խոշոր եղջերավոր, 640.2 հազ գլուխ մանր եղջերավոր գյուղատնտեսական կենդանիների պատվաստված և վարակամերժ անասնագլխաքանակ:*	30.12.2021թ	1 128 794,1

		համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանության բարձր մակարդակ: 2021թ ՀՀ պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհը պայմանավորված է պետության կողմից «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին իր կանոնադրական խնդիրների իրականացման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ:	ներկայացնելու են հաշվետվություններ՝ նշված աշխատանքները համակարգելու, պատվաստանյութերի և անասնաբուժական միջոցների ստացման և համայնքների անասնաբույժերին բաշխելու մասին, ՀՀ 10 մարզերի 38 տարածաշրջաններում նշանակվել են «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի 38 համաճարակաբաններ, որից 10-ը նաև մարզային մասնաճյուղերի գլխավոր համաճարակաբաններ, որոնց աշխատավարձը նախատեսվել է հատկացնել դրամաշնորհից:			
Ընդամենը						**1 128 794**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ 0010, ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011032050
ՀՎՀՀ 02698604

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817

ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021թ. ____________ ______ ի կնքված

N________________ պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

NN	Ծրագրի գծով իրականացվող ծախսերը (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)	Գումարը /հազ. դրամ/
	Անվանումները	
Ա	Բ	Գ
1	2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	**940660.1**
	այդ թվում՝	
	2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	**940660.1**
	- Մասնագիտական ծառայություններ	940660.1
	7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**188134.0**
	այդ թվում՝	
	7.2. Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ	**188134.0**
	- ԱԱՀ	188134.0
ԸՆԴԱՄԵՆԸ		**1128794.1**

Պետական մարմին
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ 0010, ք. Երևան,
Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011032050
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար
ՀՐԱՉՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կազմակերպություն
«Գյուղատնտեսական
ծառայությունների կենտրոն»
ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817
Տնօրեն
ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 3
2021թ. ____________-ի կնքված
N____________ պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հաճախորդի անվանումը՝ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ

3. Հաճախորդին սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

2.Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
04	02	01	03	104004

4. Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի (հաշիվների) համարը 900011032050

Ծրագրի անվանումը Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում

(հազար դրամ)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը*	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին (աճողական)												
		առաջին եռամսյակ			առաջին կիսամյակ			ինն ամիս			տարի			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ	սեպտ	հոկտ	նոյեմբ	դեկտ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին	4637	80,893.3	80,893.3	80,893.3	631,176.9	631,176.9	631,176.9	1,028,055.9	1,028,055.9	1,028,055.9	1,128,794.1	1,128,794.1	1,128,794.1	1,128,794.1
Ընդամենը		80,893.3	80,893.3	80,893.3	631,176.9	631,176.9	631,176.9	1,028,055.9	1,028,055.9	1,028,055.9	1,128,794.1	1,128,794.1	1,128,794.1	1,128,794.1

Պետական մարմին
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011032050
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար

Կազմակերպություն
«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
Տ/Գ 900018003872
ՀՎՀՀ 01805817
Տնօրեն

Հավելված N 4
2021թ. _____ _____-ի կնքված
N_____պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ էկոնոմիկայի նախարարություն***

Հիմնարկի անվանումը՝ ***«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ***

Ծրագրի անվանումը ***Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում***

Նկարագրությունը	Միջոցառման ցուցանիշի անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի ընթացքում ընդ որում աճողական			
		I եռամսյակ քանակը	I կիսամյակ քանակը	ինն ամիս քանակը	տարի քանակը
1	2	3	4	5	6
Անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպում և համակարգում	***Ախտորոշման միջոցառումների քանակը, այդ թվում, հատ***	**165170**	**483721**	**561833**	**1017193**
	բրուցելոզ, հատ	150950	455360	533472	988832
	լեյկոզ, հատ	2500	5000	5000	5000
	տուբերկուլինիզացիա, հատ	10500	20137	20137	20137
	խլնախտ, հատ	1220	3224	3224	3224
	Կանխարգելիչ (պատվաստումներ) միջոցառումների քանակը, այդ թվում , հատ	**597371**	**2276576**	**2630735**	**4285849**
	դաբաղ, հատ	350157	905440	1075642	1981082
	սիբիրախտ, հատ	144814	679942	780628	1015239
	էմկար, հատ	102400	515063	542763	1057826
	հանգուցավոր մաշկաբորբ, հատ	0	176131	231702	231702
	Նախատեսված անասնագլխաքանակի վարակամերժության աստիճանը ընդհանուր անասնագլխաքանակի մեջ ըստ հիվանդությունների, տոկոս				
	Բրուցելոզով հիվանդացած խ.ե.կ., տոկոս	90.9	90.9	90.9	90.9
	Բրուցելոզով հիվանդացած մ.ե.կ., տոկոս	90.9	90.9	90.9	90.9
	Տուբերկուլոզով հիվանդացած խ.ե.կ., տոկոս	90.9	90.9	90.9	90.9
	Լեյկոզով հիվանդացած խ.ե.կ., տոկոս	90.9	90.9	90.9	90.9
	Դաբաղով հիվանդացած կենդանիներ , տոկոս	90.9	90.9	90.9	90.9
	Սիբիրախտով հիվանդացած խ.ե.կ., մ.ե.կ. , տոկոս	90.9	90.9	90.9	90.9
	Խշխշան պալարով հիվանդացած խ.ե.կ, տոկոս	90.9	90.9	90.9	90.9

	հիվանդությունների , անգամ				
	բրուցելոզ, անգամ	1	1	1	2
	լեյկոզ, անգամ	1	1	1	1
	տուբերկուլոզ , անգամ	1	1	1	1
	խլնախտ, անգամ	1	1	1	1
	դաբաղ, անգամ	1	1	1	2
	սիբիրախտ, անգամ	1	1	1	2
	նոդուլյար մաշկաբորբ, անգամ		1	1	1
	էմկար, անգամ	1	1	1	2

Պետական մարմին
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
Հ/Հ 900011032050
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար՝
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կազմակերպություն
«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Էրեբունի 12/6
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
Հ/Հ 900018003872
ՀՎՀՀ 01805817
Տնօրեն
ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ձև

Հաստատում ե

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակա

_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____

Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև «____» «_____»20___ -ին կնքված N_____ պայմանագրի շրջանակներում կազմակերպության կողմից 20___ թվականի _____«____»-ից «____» - ն ընկած ժամանակահատվածում կատարվել (մատուցվել) են պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները (ծառայությունները).

Կատարված աշխատանքների (մատուցված ծառայությունների)									
Հ/Հ	Անվանումը	Չափի միավորը	Կատարման ժամանակա-հատվածը	Քանակական ցուցանիշները			Արժեքը (հազ. դրամ)		
				Նախատեսված		Փաստացի	Նախատեսված		Փաստացի
				Տարեսկզբին հաստատված	Ճշտված		Տարեսկզբին հաստատված	Ճշտված	
			(Ըստ եռամսյակների՝ աճողական)						
			(Ըստ փաստացի կատարման ժամանակա-հատվածի)						

Կատարված աշխատանքները համապատասխանում են կնքված պայմանագրին ու ծրագրին և ընդունվում են:

Աշխատանքը հանձնեց՝

_____

(ստորագրություն, ազգանուն, անուն)

Աշխատանքն ընդունեց՝

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

_____

(ստորագրություն, ազգանուն, անուն)

Ֆինանսական ստորաբաժանման ղեկավար

_____

(ստորագրություն ազգանուն, անուն)

Ձև 2
2021 թվականի ---------------------------կնքված
N--------------------------- պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀԱՅՏ N

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ ______________________
Կազմակերպության անվանումը — ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ

Բաժին 04 Խումբ 02 Դաս 01 Ծրագիր 3 ______________________ 2021 թ.
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ — ԱՄՍԱԹԻՎ

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում
____ (ծրագրի
անվանումը)

ՀՀ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՈԴՎԱԾ	ԳՈՒՄԱՐ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Առաջին կարգի
ստորագրություն՝

Երկրորդ կարգի
ստորագրություն՝

Կ. Տ

Ծանուցում՝ Սույն հայտը ուժի մեջ է պահանջվող ֆինանսավորման, սույն պայմանագրի N2 հավելվածով հաստատված ծրագրի կատարման ծախսերի նախահաշվին համապատասխան տրված հաշվարկ-բացատրագրի առկայության դեպքում